Այս համաձայնութեամբ վերջ դուաւ Զանգեզուրի արիւնհեղութիւնը, որ քիչ մնաց պատճառ դառնար հայ–ադրբէջանեան պատերազմի։ Ճիշտ է, կռիւները փաստօրէն շարունակուեցին, բայց այս անգամ արդէն նախայարձակը զանգեզուրցիներն էին։ Նոյեմբեր վերջերին, դափանցիները, Երևանից նոր հասած Գ. Նժդեհի գլխաւորութեամբ, մաքրեցին Օխչի չայի ապստամբ շրջանը։ Դեկտեմբերի սկզբին մաքրուեցին Գեղուայ ձորի մօտ 40 թրքաբնակ գիւղերը։ Այդ դէպքերը նորից բողոքի ու սպառնալիքի նիւթ դարձան դնդ. Ռէյի և Ուօրդրոպի ձեռքին։ Ադրբէջանի կառավարութիւնը ցասկոտ հեռագրեր տուեց ու պատասխաններ ստացաւ, բայց կեանքը դնաց իր ճանապարհով. Զանգեզուրն այլևս մաքրուած էր ներքին թշնամուց։

*

Թիւրքիայի և Ադրբէջանի միացման մէկ օղակն էլ Գողթն*) գաւառակն է՝ հազիւ 20–25 գիւղ**) ունեցող հայկական մի շրջան՝ կծկուած Ալանդեոզ ու Ղազանդէոլ բարձրաբերձ լեռների և Արաքսի միջև։ Գողթնը և Արևիքը դատում են Ադրբէջանը Նախիջևանից. վերացնել մէջտեղից այս հայկական շրջանները՝ նշանակում է բանալ ուղիղ ճանապարհ Բաղուի, Անդորայի և Պոլսի միջև։ Ուստի, տարօրինակ չպիտի թուայ այն յամառութիւնը, որով թիւրք–ադրբէջանցիները, ամէն առիթով, աշխատում էին գրաւել Գողթնը։

Երբ, Բաթումի դաշնագրից յետոյ, թիւրքերը եկան Նախիջևան, նրանց առաջին գործը եղաւ Գողթնի նուաճումը. 1918թ. յուլ.25–ին թիւրք զօրքերը մտան Ագուլիս։

Օգոստ. 8–ին, կովկասեան իսլամական կառավարութեան կողմից Օրդուբաթ քաղաքի և շրջանի զինուորական կառավարիչ նշանակուեց թիւրքական բանակի սպայ Խալիլ բէյը, որը իր ձեռքի տակ ունէր 5–6 թիւրք սպաներ, 12 թնդանօթ, 20–22 գնդացիր և հազարի չափ տեղական թաթար զինուորներ։ Օրդուբաթ հասնելուն պէս նա հրատարակեց հետևեալ յայտարարութիւնը՝ ռուսերէն և թիւրքերէն լեզուներով.

«Կովկասեան Իսլամական կառավարութեան կողմից ես նշանակուած եմ Օրդուբաթ քաղաքի և շրջանի զինուորական կառավարիչ և Աստծու օգնութեամբ այսօրուանից ստանձնեցի իմ պարտականութիւնների կատարումը։

Կովկասեան Իսլամական կառավարութիւնը ցանկանում է, որ իր բոլոր հպատակները, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, ապրեն խաղաղ, անդորր կեանքով և արիւնհեղութիւն չլինի։

Մեր սահմաններում գտնուող հայ գիւղերը, եթէ կը ցանկանան հպատակուել մեզ, պէտք է յանձնեն զէնքերը, որովհետև բոլոր մահմետական գիւղերը մինչև այժմ ենթարկուել են և ենթարկուում են հայերի յարձակման։ Այն օրուանից, որ ես Նախիջևանի շրջանումն եմ, ամբողջ Անդրկովկասում, իմ հաւաքած ստոյգ տեղեկութիւններով, աւերուած են 300 մահմետական գիւղեր, այն ինչ հայկական գիւղեր՝ միայն 3–ից մինչև 5։

*) Գողթան շրջանի դէպքերը գրելիս՝ օգտուել եմ նաև Փոչարեանի ձեռագիր յուշերից և Ագուլիսի հաշտարար դատաւոր Ց. Տէր–Անտոնեանի զեկուցումից։

**) Որից 10ը գտնուում են լեռնային շրջանում։